Հաստատում եմ՝

Դպրոցի տնօրեն Մ. Դավթյան

Ուս. գծով փոխտնօրեն Մ. Գրիգորյան

Երևանի <<Միսաք Մեծարենցի անվան թիվ 146 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի 2022-2023 ուսումնական տարվա 5ա դասարանի ղեկավարի Աշխատանքային տարեկան ծրագիր

Դասղեկ՝ Մ. Մարտիրոսյան

Դասարանի ընդհանուր բնութագիր/ներածություն

Դասարանը բաղկացած է 18 աշակերտներից, որից 9-ը տղա, 9-ը աղջիկ:

Քանի որ նոր եմ սկսել աշխատել դասարանի հետ, փորձում եմ սերտ համագործակցել երեխաների դասվարի և ծնողների հետ:

Դասարանում նախատեսվող ուսումնադաստիարակչական աշխատանքներն ուսումնական տարվա ընթացքում՝

1. Աշակերտների մանկավարժահոգեբանական հետազոտություն
2. Կրթության գործընթացում դասարանական կոլեկտիվի փոխհարաբերությունների վերլուծություն, համակարգում, կարգավորում
3. Դասարանի կոլեկտիվի կենսագործունեության փուլերի /կիսամյակ/ պլանավորում, նախապատրաստում, իրականացում, արդյունքների ամփոփում, վերլուծություն (դասղեկի ժամեր, տեղեկատվական ճեպազրույցներ, ստեղծագործական միջոցառումներ և այլն)

Սովորողի սոցիալական պաշտպանություն՝

1. Ծանոթացում սովորողների սոցիալական պայմաններին
2. Ծանոթացում սովորողների ընտանեկան կազմին
3. Բարոյահոգեբանական պայմաններին

Աշխատանք սովորողների ծնողների հետ՝

1. Երեխաների առաջադիմությանը հետևելու կոչ ծնողներին
2. Ծնողների հետ անհատական զրույցների անցկացում
3. Ծնողական ժողովների անցկացում

Էլ. Դասամատյանի, օրագրերի և այլ փաստաթղթերի վարում

Աշակերտների հաճախելիության հետևում

Առարկայական ուսուցիչների հետ աշխատանք

Աշակերտների կարգապահության հետևում

Դասարանական ժողովների անցկացում

Այցելություններ թատրոն, համերգասրահ, թանգարաններ, ցուցահանդեսներ

Սովորողների հանրօգուտ աշխատանքների կազմակերպում

Դասարանի ավագի և դասարանական խորհրդի անդամների հետ տարվող զրույցներ և աշխատանքներ՝

ԹԵՄԱՆԵՐ՝

1. ԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ – 02.09.2022

2. ԴԱՍԱՐԱՆՈՒՄ ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐ – 09.09.2022

3. ՀԻԳԻԵՆԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ - պարբերաբար

4. ԱՇԱԿԵՐՏ ՈՒՍՈՒՑԻՉ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ - պարբերաբար

5. ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՍԵՐԻՆ - պարբերաբար

6. ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՎԱՐՔ - պարբերաբար

7. ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ – պարբերաբար

ԾՆՈՂԿՈՄԻՏԵԻ ԿԱԶՄԸ՝

Նախագահ՝ Թամրազյան Տաթև

Անդամներ՝ Մաղաքյան Աստղիկ

Կարապետյան Ինեսսա

Մեժլումյան Արմինե

ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

1. Թեմա՝

Կազմակերպչական հարցեր

Նպատակ՝

Դպրոց-ընտանիք կապի ամրապնդում:

Ծնողը երեխայի առաջին և ամենակարևոր ուսուցիչն է

Ժամկետ՝

Սեպտեմբեր:

2. Թեմա՝

Առաջադիմության հետ կապված հարցերի քննարկում, կրթության դերն ու նշանակությունը:

Նպատակ՝

Ծնողների գիտակցումն այն մասին, որ հասարակության մտավոր ներուժն այն գրավականն է, որն ապահովում է ինչպես պետության հզորությունը, այնպես էլ յուրաքանչյուր քաղաքացու և ընտանիքի բարեկեցությունը:

Ժամկետ՝

Դեկտեմբեր:

3. Թեմա՝

Կազմակերպչական հարցեր

Նպատակ՝

Ծնողների իմացություն երեխաների առաջադիմության վերաբերյալ, սպասվող կիսամյակի հարցերի քննարկում:

Ժամկետ՝ Մարտ:

4. Թեմա՝

2022-2023 ուսումնական տարվա ամփոփում: Առկա խնդիրների լուծման առաջադրում:

Նպատակ՝

Դպրոց-ընտանիք կապի ամրապնդում:

Ժամկետ՝ Մայիս:

Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը

Հաշվի առնելով և' ժամանակակից դպրոցի սաների հետ աշխատելու դժվարությունները, և' տարիքային շրջանի հետ կապված դժվարությունները, և' դասարանի անհատական առանձնահատկությունները, որպես դասղեկ,նախընտրում եմ ,,Դասղեկի ժամ ,, դասաժամերը կոչել բարոյագիտության և կյանքի դասաժամեր:

Այդ դասաժամերի զրույցի և բանավեճերի թեմաներն ընտրելիս օգտվել եմ առակների տարբեր գրքերից, մանկավարժական ամսագրերից: Ավելացնեմ նաև, որ ներքևում նշված թեմաների ցուցակը միանգամայն փոփոխական է, քանի որ նպատակս է ուսումնասիրել երեխաների վարք ու բարքը և նկատված թերացումները վերացնել ու բացառել: Ընթացքում դասարանի վարքագիծը, ուսումնական առաջադիմության մակարդակը, կամ որպես աշակերտ նրանց պահվածքը կարող են նոր նպատակներ ծնել և թելադրել նոր ոճով ու թեմատիկայով աշխատանք:

Դասի համարը	Դասի թեման
1.	Հակահամաճարակային կանոնների պահպանումը
2.	Առողջություն, առողջ ապրելակերպ
3.	Իմ տունը
4.	Իմ ընտանիքը
5.	Մեր երկրի հերոսական անցյալը

6.	Ինչ է ընկերությունը և բարեկամությունը
7.	Ես և ուրիշները
8.	Վարվելակերպի ոճերը
9.	Հայաստանի զինանշանի և դրոշի պատմությունը
10.	Ուսումը և դրա անհրաժեշտությունը
11.	Բոլորս տարբեր ենք, բոլորս ապրում ենք միասին
12.	Ինչ են սովորեցնում մեզ Հ. Թումանյանի հեքիաթները
13.	Ինչպիսինն եմ ես
14.	Մեզ պետք են տարբերություններ
15.	Ինչ է կոնֆլիկտը
16.	Կոնֆլիկտների խաղաղ լուծման տարբերակներ
17.	Մարդիկ որոնց հանդիպում եմ ամեն օր
18.	Իմ հայրենիքի պատմության հայտնի էջերը
19.	Մեր երկրի օրհներգի ստեղծման պատմությունը
20.	Ժպիտը մարդու կյանքում
21.	Մաքուր պահենք բնությունը
22.	Ինչ է ազնվությունը
23.	Հետաքրքրասիրությունը լավ հատկանիշ է թե վատ
24.	Կենդանիները մարդկանց բարեկամներն են
25.	Իմ իրավունքները դպրոցում և պարտականությունները
26.	Աշխատասիրություն
27.	Հայտնի հայ մարզիկներ
28.	Ուժեղ լինել նշանակում է. . .
29.	Իմ հետաքրքրությունները և նախասիրությունները
30.	Ում եմ համարում գեղեցիկ մարդ

31.	Արդար,ազնիվ և օրինապահ
32.	Ինչ է ինձ համար դպրոցը
33.	Ինչ տվեց ինձ այս ուսումնական տարին